



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՐԻՄՍԻԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐ.
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ
ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ**

32րդ Նաւասարդեան Խաղերու փակման հանդիսութեանց Ներկայ ըլլալու համար Լոս Անճելըս իր գտնուելուն առիթով, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Տիար Գառնիկ Մկրտիչեան Չորեքշաբթի, 11 Յուլիսի կեսօրին, այցելութիւն մը տուաւ Ազգային Առաջնորդարան եւ ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ:

Տիար Գառնիկ Մկրտիչեանի կ'ընկերանար բազմալաստակ Հ.Մ.Ը.Մ.ական Տիար Գօգօ Պալեան, որ անդամ է Ազգ. Առաջնորդարանի շէնքի յանձնախումբին: Հանդիպումին Ներկայ եղաւ Ազգային Վարչութեան գանձապահ Տիար Վահան Պզտիկեան:

Սկստի ունենալով, որ Տիար Գ. Մկրտիչեան առաջին անգամ ըլլալով կ'այցելէր Ազգ. Առաջնորդարանի Նորակառոյց շէնքը, Առաջնորդ Սրբազանն ու հիւրընկալ ժողովականները ծանօթութիւններ տուին շէնքի տարբեր բաժանմունքներուն, ինչպէս նաեւ ընթացիկ ու ապագայ ծրագիրներու մասին: Տիար Գ. Մկրտիչեան շնորհաւորեց Առաջնորդ Սրբազանն ու մեր Թեմը՝ այս պատմական իրագործումին համար, ապա, իր կարգին որոշ տեղեկութիւններ հաղորդեց յատկապէս Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն ու ընդհանրապէս Լիբանանի վիճակին մասին:

**PRELATE WELCOMED HOMENETMEN CENTRAL EXECUTIVE
CHAIR MR. KARNIG MGRDICHIAN**

On the afternoon of Wednesday, July 11, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed Chair of the Homenetmen Central Executive Mr. Karnig Mgrdichian to the Prelacy. Mr. Mgrdichian, who was in Los Angeles to participate in the closing ceremonies of the 32nd Navasartian games, was accompanied by longtime Homenetmen member and member of the Prelacy Building Committee Mr. Koko Balian. Prelacy Executive Council Treasurer Mr. Vahan Bezdikian also participated in the meeting.

Given that it was Mr. Mgrdichian's first visit to the new Prelacy headquarters, the Prelate and representatives informed him of the various

departments of which the Prelacy is comprised and also of future activities. Mr. Mgrdichian in turn imparted details of the future plans of Homenetmen and of the current situation in Lebanon.